

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՅԵՐՈՒԽ ՍՈՎՈՐՈՂ ԱՐՏԱՅՄԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԶԱՐՄԱՐՈՂԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Յոհաննիսյան Մ.Գ., Ավետիսյան Լ.Ռ.

Երևանի Մ. Զեդեգու անվ. պետական բժշկական համալսարանի հիգիենայի և Էկոլոգիայի ամբիոն
Երևան, Հայաստան

Յետազոտության նպատակ էր՝ ուսումնասիրել Երևանի պետական բուհերում սովորող արտասահմանցի ուսանողների հիվանդացության կառուցվածքի և հարմարողական պոտենցիալի դինամիկան՝ ուսման տարիների ընթացքում:

Առաջին կուրսեցիների շրջանում, ըստ տարածվածության, առաջին տեղը գրավում են կլինիկական և լաբորատոր հետազոտությունների ընթացքում բացահայտված և այլ խորագրերում չդասակարգված ախտանիշները, նշանները և նորմայից շեղումները (20.0%-ը տախիկարդիա ախտորոշումով): Երկրորդ (18.9%) և երրորդ (14.4%) տեղերը, ըստ տարածվածության, առաջին կուրսեցիների շրջանում զբաղեցնում են համապատասխանաբար աչքի հիվանդությունները (կարճատեսություն ախտորոշումով) և ոսկրամկանային համակարգի հիվանդությունները, որոնք հիմնականում ներկայացված են կեցվածքի խանգարումներով և հարթաթաթոթյամբ:

Ավարտական կուրսերում սովորող արտասահմանցի ուսանողների շրջանում առաջին տեղը, ըստ տարածվածության, զբաղեցնում է կարճատեսությունը (22.3%):

Երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնում են նյարդային, ոսկրամկանային համակարգերի և շարակցական հյուսվածքի հիվանդությունները, համապատասխանաբար 16.0% և 14.9%:

Ուսման տարիների ընթացքում կտրուկ ավելանում է նաև մարսողական համակարգի հիվանդությունների տարածվածությունը (5.2%):

Ուսման տարիների ընթացքում բավարար հարմարողություն ունեցող ուսանողների թիվը նվազում է, իսկ հարմարողական մեխանիզմների ֆունկցիոնալ լարվածություն ունեցող ուսանողների թիվն ավելանում է 17.6%-ից մինչև 33.0%՝ տղաների և 42.5%-ից մինչև 57.1%՝ աղջիկների շրջանում, ինչն անուղղակիորեն վկայում է ուսման տարիների ընթացքում ուսանողների առողջության կորստի մասին:

Արտասահմանցի ուսանողների առողջական վիճակի բացասական փոփոխությունները, Երևանի բուհերում ուսման տարիների ընթացքում, հավանաբար պայմանավորված է հիմնականում ինտենսիվ ուսումնական գործընթացով, վնասակար սննդային սովորությամբ, նոր կլիմայական պայմաններով, ինչպես նաև սոցիալական և տնտեսական բեռով:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY